ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

21.11.2013թ.
211-ի 5

Երեւանի քաղաքապետ
պարոն Տարոն Մարգարյանին

## Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Մարգարյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. 20.11.2013թ.-ի դրությամբ Երեւան քաղաքի ո՞ր փողոցներում եւ ո՞ր փողոցների ո՞ր հատվածներում են առկա օրենքին եւ ՀՀ կառավարության որոշումներին համապատասխանող՝ առանձնացված վճարովի ավտոկայանատեղեր,
2. Ավտոկայանատեղի տուրքի վճարման նկատմամբ հսկողություն իրականացնելու համար նկարահանող սարքերը Երեւան քաղաքի ո՞ր փողոցների ավտոկայանատեղերում են տեղադրված,
3. Խնդրում ենք տրամադրել Երեւան քաղաքի վճարովի ավտոկայանատեղերում տեղադրված յուրաքանչյուր նկարահանող սարքի տեղադրման համար հիմք հանդիսացած իրավական ակտի (օրենք, որոշում, կարգադրություն եւ այլն) պատճենը:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան